ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
պարոն ԳԱԼՈՒՍՏ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հովհաննես Մարգարյանի, Հեղինե Բիշարյանի, Իշխան Խաչատրյանի, Միհր Շահգելդյանի և Լևոն Դոխոլյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (Պ-552-20.06.2014-ՊԻ-010/0 և Պ-552[1-3]-20.06.2014-ՊԻ-010/0) փաթեթի վերաբերյալ:

1. Ներկայացված օրենքների նախագծերով առաջարկվում է վերադառնալ այն կարգավորում-ներին, որոնք գործել են մինչև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության նոր օրենսգրքի ընդունումը: Մասնավորապես՝ նախագծերով առաջարկվում է անվիճարկելի դատական

ակտերի հարկադիր կատարումն իրականացնել դատական կարգով, ինչը ենթադրում է, որ նախագծով փորձ է արվում վերականգնել նախկինում գոյություն ունեցող վճարման կարգադրությունների վարույթը՝ առանց համապատասխան համակարգային փոփոխություններ նախատեսելու գործող Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում: Այդ առումով անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագիրը և ծրագրից բխող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» ՆԿ-96-Ա կարգադրության համաձայն մշակված և 2013 թվականի դեկտեմբերի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով և համապատասխան օրենքների փաթեթով կատարվել են համակարգային, ինստիտուցիոնալ փոփոխություններ:

Ինչ վերաբերում է նախագծի հիմնավորման մեջ ներկայացված այն դիրքորոշմանը, որ «2013 թվականին ընդունված նախագծերի փաթեթը հնարավորություն է ընձեռել հարկային և տեղական ինքնակառավարման մարմիններին առանց դատարանի որոշման դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով բռնագանձում իրականացնել քաղաքացիների սեփականության նկատմամբ, որի հետևանքով խախտվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածով ամրագրված քաղաքացիների սեփականության իրավունքը, ապա այդ առումով հայտնում ենք, որ սահմանադրական իրավունքը, ըստ էության, չի պաշտպանում անձի ձեռքբերումները, եթե նա խախտել է իր սահմանադրական պարտականությունը, որն ամրագրված է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 45-րդ հոդվածում՝ հարկեր, տուրքեր և այլ պարտադիր վճարներ կատարելու վերաբերյալ: Այսինքն՝ սեփականության իրավունքը չի կարող ծագել ի սկզբանե այն ժամանակ, երբ անձն ունի չկատարված սահմանադրական պարտականություն պետության առջև: Մասնավորապես՝ հարկային պարտականություն, և Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ ամրագրված սեփականության իրավունքի պաշտպանությունը բնավ չի

ներառում այն գույքը, որն անձը ձեռք է բերել իր սահմանադրական պարտականությունը չկատարելու, ոչ պատշաճ կատարելու արդյունքում:

Մեր կարծիքով գործող իրավակարգավորումն իրավաչափ է, քանի որ անձից պահանջվում է կատարել այն, ինչը վերջինս արդեն իսկ պարտավոր էր կատարել օրենքի ուժով: Հետևաբար, այս դեպքում հանրային իրավական դրամական պահանջների արտադատական կարգով կատարումը լիովին բավարար է, քանի որ նույնիսկ այս դեպքում պահպանվում է անձի իրավունքը ցանկության դեպքում վիճարկելու դրամական պահանջի հիմքում դրված վարչական ակտը:

Հարկ է նաև նշել, որ շրջանառության մեջ են գտնվում Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից մշակված «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» և «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը, որոնցով առաջարկվում է հանրային իրավական դրամական պահանջներով օրենքի պահանջների խախտմամբ պայմանավորված տույժեր կամ տուգանքներ սահմանող անբողոքարկելի վարչական ակտերի կատարման դատական կարգ սահմանել այն դեպքերում, երբ ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է հինգ հարյուր հազար դրամը, ֆիզիկական անձից գանձման ենթակա դրամական պահանջի հարկադիր կատարումը հնարավոր է ապահովել միայն նրան սեփականության իրավունքով պատկանող միակ բնակարանի բռնագանձմամբ, տնտեսավարող սուբյեկտից գանձման ենթակա դրամական պահանջը գերազանցում է տնտեսավարող սուբյեկտի կողմից հաշվետու տարվա ընթացքում վճարած կամ վճարման ենթակա պետական հարկերի բոլոր հարկատեսակների հանրագումարը:

Հարկ ենք համարում տեղեկացնել նաև, որ նույն խնդրի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանում առկա է Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի դիմումը:

Ելնելով շարադրվածից, Հայաստանի Հանրապետության կառավարությունն օրենսդրական նախաձեռնության հեղինակներին առաջարկում է առայժմ ձեռնպահ մնալ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի քննարկումից և դրան անդրադառնալ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի որոշումից հետո:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Հովհաննես Մանուկյանը:

Նախագծերի ընդունումը Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման կամ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Կից ներկայացվում են օրենքների նախագծերի կարգավորման ազդեցության գնահատման եզրակացությունները:

Հարգանքով՝

ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունման դեպքում

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումն առողջապահության բնագավառի վրա ազդեցություն չի ունենա:

Եզրակացություն

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի վերաբերյալ սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատման

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ նախագծերի) սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 27.1 հոդվածի և ՀՀ Կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի թիվ 18-Ն որոշման համաձայն:

Նախագծերի սոցիալական պաշտպանության ոլորտում կարգավորման ազդեցության գնահատումը կատարվել է սոցիալական պաշտպանության ոլորտի և դրա առանձին ենթաոլորտների իրավիճակի բնութագրիչների և դրանց ինդիկատորների հիման վրա:

Նախագծերը՝

ա) ռազմավարական կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **չեզոք ազդեցություն.**

բ) շահառուների վրա կարգավորման ազդեցության տեսանկյունից ունեն **դրական ազդեցություն:**

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերն իրենց մեջ Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի հոկտեմբերի 22-ի «Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հակակոռուպցիոն բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման իրականացման կարգը հաստատելու մասին» թիվ 1205-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով նախատեսված որևէ կոռուպցիոն գործոն չեն պարունակում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի՝ բյուջետային բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման վերաբերյալ

«Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի ընդունումն այլ հավասար պայմաններում կարող է հանգեցնել ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների եկամուտների նվազման, քանի որ առաջարկվող փոփոխությունների արդյունքում կնվազի հարկային մարմնի կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից վերահսկվող հարկային եկամուտների հավաքագրման գործընթացի արդյունավետությունը:

Նախագծերի փաթեթի թե ընդունումը և թե չընդունումը ՀՀ պետական բյուջեի և համայնքների բյուջեների ծախսերի, ինչպես նաև բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխման չի հանգեցնում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի մրցակցության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով (այսուհետ՝ Նախագծեր) նախատեսվում է մի շարք փոփոխություններ, մասնավորապես՝ հարկային պարտավորությունների գծով գումարների մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում քաղաքացիներին սեփականությունից հնարավոր կլինի զրկել միմիայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:

Նախագծերով կարգավորվող շրջանակները չեն առնչվում որևէ առանձին ապրանքային խմբի շուկայի հետ, ուստի և Նախագծերի ընդունմամբ որևէ առանձին ապրանքային խմբի շուկայում մրցակցային դաշտի վրա ազդեցություն լինել չի կարող:

Հիմք ընդունելով նախնական փուլի արդյունքները՝ կարգավորման ազդեցության գնահատման աշխատանքները դադարեցվել են՝ արձանագրելով Նախագծերի ընդունմամբ մրցակցության միջավայրի վրա *ազդեցություն չհայտնաբերվելու* եզրակացություն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի տնտեսական, այդ թվում՝ փոքր և միջին ձեռնարկատիրության բնագավառում կարգավորման ազդեցության գնահատման

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերի (այսուհետ՝ Նախագիծ) գործարար և ներդրումային միջավայրի վրա կարգավորման ազդեցության գնահատման նպատակով իրականացվել են նախնական դիտարկումներ:

Գնահատման նախնական փուլում պարզ է դարձել, որ Նախագծով նախատեսվում է վարչական մարմինների կողմից գումարի բռնագանձումը և գույքի արգելադրումը իրականացնել միայն դատարանի միջոցով:

Նախագծի ընդունման դեպքում, դրա կիրարկման արդյունքում գործարար և ներդրումային միջավայրի վրա ընդհանուր առմամբ կնախատեսվի ***դրական ազդեցություն***, եթե համապատասխան

փոփոխություններ կատարվեն «Հարկերի մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 2-րդ կետում, ըստ որի հարկային մարմիններին և տեղական ինքնակառավարման մարմիններին իրավունք է վերապահվում դիմել դատարան հարկային պարտավորությունները չկատարած հարկ վճարողին անվճարունակ ճանաչելու պահանջով, եթե վերջինս 183 օրով ուշացրել է իր հարկային պարտավորությունների կատարումը՝ անկախ գումարի չափից: Նշված դրույթը հակասում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասին, որով սահմանված են պարտապանին դատական կարգով սնանկ կամ անվճարունակ ճանաչելու չափանիշները:

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի բնապահպանության բնագավառում կարգավորման

1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի (այսուհետ՝ օրենքներ) ընդունման արդյունքում մթնոլորտի, հողի, ջրային ռեսուրսների, ընդերքի, բուսական և կենդանական աշխարհի, հատուկ պահպանվող տարածքների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

2. Օրենքների նախագծերի չընդունման դեպքում շրջակա միջավայրի օբյեկտների վրա բացասական հետևանքներ չեն առաջանա:

3. Օրենքների նախագծերը բնապահպանության ոլորտին չեն առնչվում, այդ ոլորտը կանոնակարգող իրավական ակտերով ամրագրված սկզբունքներին և պահանջներին չեն հակասում:

Օրենքների կիրարկման արդյունքում բնապահպանության բնագավառում կանխատեսվող հետևանքների գնահատման և վարվող քաղաքականության համեմատական վիճակագրական վերլուծություններ կատարելու անհրաժեշտությունը բացակայում է:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-552-20.06.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» ՀՀ. 1997 թ-ի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 29.1 հոդվածը ճանաչել ուժը կորցրած:
Հոդված 2. Օրենքի 29.2 հոդվածը ճանաչել ուժը կորցրած
Հոդված 3. Օրենքի 33-րդ հոդվածը լրացնել 1եւ 2-րդ պարբերությունները հետեւյալ բովանդակությամբ:
1) «Հարկային պարտավորությունների գծով» գումարների մուծումը սահմանված ժամկետներից ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը իրավունք ունի սահմանված կարգով դատարան ներկայացնել հայցադիմում՝ հարկ վճարողի գույքի բռնագանձման համար»
2) «Հարկերի վճարումն ուշացնելու դեպքում հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերի, հարկերի վճարման համար սահմանված ժամկետից 183 օրվա ընթացքում սահմանված կարգով հարկ վճարողի անվճարունակ ճանաչելու հայցով դիմում է դատարան: Ընդ որում, այդ հայցից հարկային մարմինը կամ տեղական ինքնակառավարման մարմինը չի կարող հրաժարվել, քանի դեռ հարկային պարտավորություններն ամբողջությամբ մարված չեն»:
Հոդված 4. Օրենքի 30.2 հոդվածում՝
1) Երկրորդ պարբերությունից հանել. «, եթե հարկային մարմնի կողմից իրականացված վարչական վարույթի ընթացքում արդեն իսկ ձեռք բերված ապացույցները բավարար հիմք են տալիս ենթադրելու, որ հարկ վճարողը կարող է թաքցնել, փչացնել կամ սպառել վարչական ակտի կատարման համար անհրաժեշտ գույքը, ապա» բառերը.
2) Երկրորդ պարբերության «Հարկային մարմնի կողմից գույքի արգելանքը» բառերը փոխարինել «Գույքի արգելանքը» բառերով.
3) Հինգերորդ պարբերությունից հանել «չկատարված պարտավորության չափը, » բառերը:
4) 13-րդ պարբերությունում պարտավորության դադարման, բառերից հետո ավելացնել «արգելանք դնելուց 1 ամսյա ժամկետում,» բառերը «Վարչական ակտն անբողոքակելի դառնալուց հետո ՀՀ. արդարադատության նախարարության դատական ակտերի հարկային կատարման ծառայության» բառերը փոխարինել «դատարան հայց» բառերով եւ ավելացնել «կամ դատարանի կողմից հայցի ապահովման միջոցով կիրառելու միջնորդությունը» բառերը
5) 13-րդ պարբերությունից հանել արգելանք կիրառած անձինք եւ մարմինները պարտավոր են անհապաղ վերացնել իրենց կիրառած արգելանքը, եթե հարկ վճարողը ներկայացնում է պարտավորությունը լրիվ չափով վճարելը հավաստող անդորագիրը կամ 29.1 հոդվածով սահմանված կարգով կնքված պարտավորության աստիճանական մարման ժամանակացույցը:» բառերը.
6) 14-րդ պարբերության 1եւ 2 նախադասությունները ուժը կորցրած ճանաչել.
Հոդված 5. Սույն օրենքը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հոջորդող 10-րդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-552[1]-20.06.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության 1998 թ-ի մայիսի 5-ի ՀՕ-221 օրենքի (այսուհետ՝ Օրենք) առաջին հոդվածից հանել «Սույն օրենքը, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ գլխին համապատասխան, սահմանում է նաեւ հանրային իրավական դրամական պահանջների կատարման պայմանները եւ կարգը՝ այնքանով, որքանով դրա նորմերն իրենց էությամբ (mutatis mutandis) կիրառելի են անբողոքարկելի վարչական ակտի կատարման նկատմամբ»:
Հոդված 2. Օրենքի 2-րդ հոդվածում՝
1) վերնագրում ավելացնել «դատական» բառը.
2) առաջին մասի 7-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:
Հոդված 3. Օրենքի 37-րդ հոդվածի առաջին մասի 9-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:
Հոդված 4. Օրենքի 44-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:
Հոդված 5. Օրենքի 72.1 հոդվածում ավելացնել առաջին մաս հետեւյալ բովանդակությամբ.
1.«Հարկադիր կատարողի նշանակած տուգանքները բռնագանձվում են դատարանի վճռով:»:
Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մ տնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-552[2]-20.06.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության 2004թ-ի փետրվարի 18-ի ՀՕ -41-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 69-րդ հոդվածից հանել «այդ թվում՝ զուգորդվող վարչական ակտերի միջամտող դրույթները, ինչպես նաեւ » բառերը:
Հոդված 2. Օրենքի 71-րդ հոդվածի առաջին մասում՝
1) «ա» կետի «2 ամսվա» բառերը փոխարինել «6 ամսվա » բառերով.
2) «գ» կետի «2 ամսվա»բառերը փոխարինել «3 ամսվա» բառերով:
Հոդված 3. Օրենքի 82-րդ հոդվածի 4-րդ մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ. «Տուգանքը կարող է նշանակվել միայն դատարանի վճռով՝ վարչական մարմնի պահանջի հիմման վրա»:
Հոդված 4. Օրենքի 88-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.
Օրենքի հոդված 88. Դրամական պահանջների կատարման կարգը
«Դրամական պահանջները ենթական են կատարման դատական ակտերի հիմման վրա՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:»:
Հոդված 5. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-552[3]-20.06.2014-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թ-ի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածի 6-րդ մասը ուժը կորցրած ճանաչել:
Հոդված 2. Օրենսգրքի 305-րդ հոդվածի 4-րդ մասում «հնգապատկվում է» բառերից հետո վերջակետը փոխարինել ստորակետով
1) «, եւ ավելացնել՝ «որը ենթակա է դատական կարգով բռնագանձման» բառերը.
2) Վերջին նախադասությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ «Տուգանքի գումարի բռնագանձման համար վարույթ իրականացնող մարմինը պարտավոր է 60-օրյա ժամկետը լրանալուց հետո՝ 120 օրվա ընթացքում դիմել դատարան:»:
3) Օրենսգիրքը լրացնել 306-րդ հոդվածով հետեւյալ բովանդակությամբ.
Հոդված 306 . Տուգանք նշանակելու մասին որոշման հարկադիր կատարումը
«Տուգանքը սույն օրենսգրքի 305 հոդվածով սահմանված ժամկետում խախտողի կողմից չվճարվելու դեպքում տուգանք նշանակելու մասին որոշումն ուղարկվում է տուգանքի գումարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կանոններին համապատասխան նրա աշխատավարձից կամ այլ վաստակից, կենսաթոշակից կամ կրթաթոշակից հարկադիր կարգով պահելու համար:
Եթե տուգանքի ենթարկված անձը չի աշխատում կամ տուգանքի գանձումը խախտողի աշխատավարձից կամ այլ վաստակից, կենսաթոշակից կամ կրթաթոշակից հնարավոր չէ այլ պատճառներով, տուգանքի գանձումը տուգանք նշանակելու մասին մարմնի (պաշտոնատար անձի) որոշման հիմման վրա կատարում է դատական կատարածուն՝ գանձումը խախտողի անձնական գույքի, ինչպես նաեւ ընդհանուր սեփականության մեջ նրա բաժնի վրա տարածելու ճանապարհով:
Տուգանքի գանձումը չի կարող տարածվել այն գույքի վրա, որի վրա Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գանձում չի կարող տարածվել կատարողական փաստաթղթերով:
Արգելվում է պաշտոնատար անձանց նկատմամբ նշանակված տուգանքները գանձել ձեռնարկությունների, հիմնարկների եւ կազմակերպությունների հաշվին:
Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը»:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»,«ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ »ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրենքների նախագծերի փաթեթի ընդունումը պայմանավորված է վերականգնելու Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 31-րդ հոդվածի պահանջները, այն է՝ «Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի»: 2013թ-ի դեկտեմբերին օրենքի նախագծերի փաթեթը հնարավորություն է ընձեռել Հարկային եւ ՏԻՄ մարմիններին առանց դատարանի որոշմամբ, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով բռնագանձում իրականացնել քաղաքացիների սեփականության նկատմամբ, ավելին ԴԱՀԿ-ը կոչված է դատարանի որոշումները, այն է դատական ակտերը հարկադրաբար կատարելու, բռնագանձում իրականացնելու, այլ ոչ թե մյուս պատկան մարմինների որոշումները:Այսինքն՝ ստացվում է այնպես, որ դատական ակտերը հարկադիր կիրառելու փոխարեն ԴԱՀԿ-ը բռնագանձում կարող է իրականացնել հարկային եւ ՏԻՄ մարմինների կողմից ընդունված ակտերով:

Ներկայացված օրենքի ընդունմամբ կվերականգնվի քաղաքացիների սահմանադրական իրավունքը եւ քաղաքացիներին հնարավոր կլինի զրկել սեփականությունից միմիայն դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա, ինչը սահմանադրական պահանջ է: